ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2016 թվականի N 42 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 306-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի հունիսի 3-ի «Նախա-բարական կոմիտեներ ստեղծելու մասին» N 306-Ն որոշման N 2 հավելվածի 1-ին կետում կատարել հերևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) «ՀՀ ֆինանսների նախարար» բառերից առաջ լրացնել «ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար» բառերով.

2) հանել «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ» բառերը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. փետրվարի 3
Երևան

42k.voroshum